Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին

<<1-ին լրատվականի>> թղթակից Աղրինե Թորոսյանից

ք. Վանաձոր, Երևանյան խճ. 145/1, բն.35

ՀՀ քաղաքացի

հեռ. 077 079 669

Տեղեկություն ստանալու հարցում

Համաձայն ՀՀ սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը. Լոռու մարզի բոլոր տիպի բուժհաստատությունների հաստիքացուցակներն ու դրույքաչափերը՝ առանձին-առանձին: Մեր տեղեկություններով՝ բժիշկների թափուր հաստքիներ կան, որոնք տարիներով չեն լրացվում: Նշեք խնդրում եմ, թե կոնկրետ որ բուժհաստատություններում են այդ թափուր աշխատատեղերը (հաստատություններն ըստ համայնքների, անվանումների), երբվանից են թափուր, որ մասնագիտությունների գծով, և որքան է առաջարկվող աշխատավարձը թափուր աշխատատեղերից յուրաքանչյուրի դեպքում (առաջարկվող աշխատավարձերը ներկայացրեք ըստ առանձին հիմնարկների և այդ հիմնարկներում առաջարկվող պաշտոնների): Ինչն է պատճառը, որ մարզում բժիշկների և այլ հաստիքներ չեն լրացվում, մասնագետների բացակայությունն է պատճառը, ցածր վարձատրությունը, թե կան նաև այլ պատճառներ: Խնդրում եմ մանրամասն հիմնավորեք:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ՝

Աղրինե Թորոսյան

09.09.2013